Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն Տիկին Սոփիայի Նազարեան Իզմիրեանց վասն սիրալիր ընդունելութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ յարկաւ իւրով։ Թ. 744.

— Ցանուն պ. Կոստանդնի Իւզբաշեան վասն օգտակար գործակցութեան նորին յազգային գործս։ Թ. 745.

— Ցանուն պ. Միքայէլի Թորոսեան Արմաւիրցւոյ վասն նուիրաբերութեան միոյ շուրջառի և միոյ սպիտակ շապկի ի կիրառութիւն Մայր Տաճարի Ս. Էջմիածնի։ Թ. 752.

— Ցանուն եղբարց Պետրոսեանց Ագուլեցւոյ վասն նուիրաբերեալ միոյ դորգի։ Թ. 753.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ Ցանուն Տ. Վռամշապուհ քահանայի Քիւպարեան՝ Հոգեւոր հովուի հայոց Փարիզու, որով շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան։ Թ. 778.

— Վարդապետական լանջախաչի յանուն Տ. Արսէն վարդապետի Վեհանուոյ Սուչաւայի։ Թ. 781.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Օգոստոսի 22-ին Սինոդը որոշեց պատուիրել Ռուսաստանի հայոց բոլոր Կոնսիստորեաններին կազմել և շուտով ներկայացնել իւրաքանչիւր Կոնսիստորիայի և

ատորադրեալ Հոգևոր Կառավարութեանց 1906 թուի նա-
խահաշիւը ցոյց տալով պաշտօնեաների և ծառայողների
ռոճիկն առանձին առանձին։ Սորա հետ միասին պատ-
ուիրուեց մատուցանել (1900—1904) վերջին հինգ տար-
ուայ եկամտից հաշուեկշիռը մինչև սոյն հոկտեմբերի 1-ը։

Նոյն թուին Սինոդը որոշեց Արէշի գաւառի Մազրդու-
գիւղացի անչափահաս Ինջի Աղաջանեանի պսակը Ջհան-
գիր Ստեփանեանի հետ ճանաչել անվաւեր, Գրիգոր քա-
հանայ Տէր Առաքելեանցին Բարձրագոյն Հրովարտակի
հիման վրայ ազատել քրէական պատասխանատուութիւ-
նից և դադարեցնել չորս ամիս ժամանակով, իսկ գործա-
կալ Եղիշէ քահանայ Եղիազարեանին ենթարկել եռամ-
սեայ ապաշխարութեան։ Պսակուածների հետ վարուել
օրինաց 38 և 39 յօդ. և վճռիս կատարման մասին հրա-
ման տալ Ղարաբաղի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Վրաստանի և Իմե-
րէթի վիճակային Կոնսիստորիային Գօրգոյ ծխատէր ան-
հնազանդ Մկրտիչ քահանայ Աշչակունուն ուղարկել
ապաշխարութեան համար Հաղպատի վանքը մի ամիս
ժամանակով և քահանայի ապաշխարանքից յետոյ յայտ-
նել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Աստրախանի Կոն-
սիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Մոզ-
դոկի բնակիչ տոհմային պատուաւոր քաղաքացի Գէորգ
Մկրտչեան Օրդուխանեանին Բագալպաշինսկ քաղաքի ս.
Գէորգ եկեղեցու վրայ քահանայ ձեռնադրելու։

Նոյն թուին Սինոդը որոշեց ժամանակաւոր դանձա-
պահ կարգել Սինոդի անդամ Մատթէոս վարդապետ
Մատթէոսեանին։

Օգոստոսի 24-ին Սինոդը որոշեց շրջաբերականով
հրամայել բոլոր ատորադրեալ հիմնարկութեանց և պաշ-
տօնէից, որ գինուորագրական ատեաններին ներկայացնե-
ն

լիք ծննդական վկայականներիս քաղուածքների համար անշուշտ դրոշմանիշ (մարկաներ) պահանջուին։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Աստապատի բնակիչ Արտաշէս Աբեղեանին յիշեալ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և դիմեց Երևանի նահանգապետին օրինական հաճութիւն ստանալու համար։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Ռափայէլ Տէր Յովհաննիսեանին Բոզդոպան գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու։

Օգոստոսի 26-ին Սինոդը թոյլ տուաւ Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Դաւիթ Տէր Աւագեան Տէր Ազարեանցին և ձեռնադրել նրան քահանայ Կաւատ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը որոշեց հրամայել բոլոր թեմական հաստատութիւններին մինչև Սեպտեմբերի 15-ը ներկայացնել այն բոլոր հիմնարկութեանց և պաշտօնէից ցուցակը, որոնց ծրարները փոստատները պէտք է ուղարկեն ձրիապէս։

Օգոստոսի 31-ին Սինոդը հրամայեց Տ. գանձապահին տալ վանական կառավարութեան ինն հազար ռուբլի, իսկ ճեմարանի ծախուց համար եօթ հազար ռուբլի։

Նոյն թուին Սինոդը որոշեց շրջաբերականով հրամայել բոլոր վիճակային Կոնսիստորիաներին, որ Սինոդ ներկայացնեն կալուածների գրաւումից ցայսօր գոյացած Աթոռային և վիճակային արդեանց մնացորդը և յիշեալ ժամանակուայ համար եկամտից մանրամասն հաշիւը։

Սեպտեմբերի 2-ին Սինոդը թոյլատրեց Վրաստանի և Իմերէթի վիճակային Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Արսէն Տէր Մարտիրոսեան Մելիքեանցին և ձեռնադրել քահանայ Լօրուտ, Ահնիզոր և Շա-

մուտ գիւղերի վրայ իրեն հրաժարուած հօր Տէր Մարտիրոսի տեղը։

Նոյն Կոնսիստորիային թոյլատրուեց հոգևորականութեան մէջ ընդունել Մեսրոպ Տէր Յարութիւնեանցին Վերին Աղդան գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու հրաժարուած Տ. Ստեփան Ալաթեանի տեղը։

Նոյն թուին հրամայուեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցու ծիսի համաձայն մկրտել հրէուհի Սառա Էղիլ—Լազարեան Գրիցեակուն։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային Բաթում քաղաքի բնակիչ երկու եղբայր Աւդուլ Ալուն և Ալի Խուդավերդիներին ընդունել Հայաստանեայց եկեղեցու ծոցը։

Սեպտեմբերի 2-ին Սինոդը լուծեց Տեղ գիւղացի Աննա Խոսրովեանի և Մանուչարբէկ Մելիք Բարխուդարեանի պսակը վերջնիս բացակայութեան պատճառով և իրաւունք տուաւ Աննային նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը հաստատեց Աստրախանի Կոնսիստորիայի վճիռը Եղիսաբէթ Աստուածատրեան և Յարութիւն Առաքելեանի պսակը ամուսնական անհաւատարմութեան պատճառաւ և իրաւունք տուաւ նորէն ամուսնանալու։

Սեպտեմբերի 5-ին Սինոդը որոշեց չորս ամսուայ եկեղեցական ապաշխարանքի ենթարկել Շուշուայ գաւառի Սարգսաշէն գիւղի բնակիչ Սարգիս Միրզաբէկեանին և օրիորդ Պարսն Բալայեանին ազգակցական չհաստատութեան վեցերորդ աստիճանում անգիտակցաբար պսակելու համար թէ պսակուածներին և թէ պսակող Յովհաննէս քահանայ Աւշարեանցին, Աղէքսանդր քահանայ Դօլուխանեանցին և Մեսրոպ քահանայ Մամիկոնեանցին, իսկ պսակը ճանաչել օրինաւոր։

Նոյն թուին Սինոդը լուծեց Մեծ Սալա գիւղացի Աւետիս Բրդուտեանի և Գեղեցիկ Օգսենտեանի պսակը ամուսնական անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տալ Աւետիսին նորից ամուսնանալու։

Սեպտեմբերի 7-ին Սինոդը որոշեց մարմնաւոր դատի յանձնել Դումեցի Աղէքսանդր քահանայ Տէր Յակոբեանին Սափի Բալայեանի պսակը կատարելու համար վեցերորդ աստիճանի ազգակցական չհասութեան համար։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գըտնելով Աղէքսանդր Մելիք Սարգսեանին, որոշեց դիմել Կարսի նահանգապետին նրան հարկից ազատելու համար։

Սեպտեմբերի 9-ին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Գարեգին Տէր Թադէոսեանին և ձեռնադրել քահանայ Գեչրլու գիւղի վրայ։

Սեպտեմբերի 14-ին Սինոդը հաստատեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի եղրակացութիւնը Գօրլոյ գաւառի Գրակալ գիւղացի Միքայէլ Տատեանի և Եղիսաբէթ Դալլաքեանի ամուսնութիւնը Միքայէլի տաժանակիր աշխատանքի դատապարտուած լինելու պատճառով և իրաւունք տուաւ Եղիսաբէթ Դալլաքեանին նորէն ամուսնանալու։

Սեպտեմբերի 16-ին Սինոդը հրամայեց Մխիթար վարդապետին գնալ Երևան և քննել Գրիգոր քահանայ Սուքեասեանի գործը Փոխ թեմակալի դէմ։

Սեպտեմբերի 19-ին Սինոդը թոյլ տուաւ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Աշան գիւղի բնակիչ Գաբրիէլ Տէր Յարութիւնեանին նոյն գիւղի եկեղեցում սպասաւորելու համար։